Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 23-06-2025 թ. որոշմամբ
«ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 21/1
1.3 Պետական գրանցման համարը		286.160.04441
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-01-11
1.5 ՀՎՀՀ-ն		02561224
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11219797
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.eif.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@eif.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Բագրատ Ենգիբարյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	211	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ՀՀ Կառավարության «Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցություն» միջոցառում պետական աջակցության 2024 թվականի ծրագիր	13,000,000

	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն «ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔ»-ի, ընդհանուր ենթակառուցվածքների համակարգման, պահպանման և սպասարկման» ծառայությունների մատուցման 2024 թվականի ծրագիր	67,964,400
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Համաշխարհային բանկի ,,Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի,, վարկային ծրագիր	645,803,927
	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Հայաստանյան Աշխատուժի Զարգացման ուղղված միջոցառումներ » ծրագիրն իրականացնելու համար կնքված թիվ 72011121CA00003 Համագործակցության համաձայնագիր	323,569,416
	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) "Հաստատագրված գումարի մրցանակ" ծրագրի թիվ 72011123FA00001 Համագործակցության համաձայնագիր	375,309,103
	Ֆիլիպ Մորիս Արմենիա ՍՊԸ-ի հետ առ 02 հուլիսի 2024 թվականին կնքած պայմանագիր	223,880,655
	PORTO DIGITAL ընկերության միջև կնքված «Թվային ծառայությունների ձեռքբերման համար անհատականացված ուսուցում նախագծի» ծրագիր	5,145,325
	ՄԱԿ -ի Մանկական Հիմնադրամի (UNICEF) միջև առ 28 մարտի 2024թ. թիվ ARM/PCA 202239/ SPD 2024120 Ծառայությունների մատուցման պայմանագրի (Պատանիներին, նրանց ծնողներին և ուսուցիչներին զինել կիբերանվտանգության վերաբերյալ կարևոր թվային հմտություններով և գիտելիքներով) ծրագիր	26,915,397
	Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամ (Հայաստան)-ի առ նոյեմբերի 22-ին 2023 թվականի ԹԻՎ AGBU/F-204/23 ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, «ԿԱՏԱՊՈՒԼՏ Ստեղծարար աքսելերացիոն» ծրագիր	2,020,000
	Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի գործունեության ապահովման 2024 թ ծրագիր	268,061,660
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Դասընթացների անցկացման ծառայություններ	16,652,700
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ՀՀ Կառավարության «Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցություն» միջոցառում պետական աջակցության 2024 թվականի ծրագիր	13,562,219	
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ««ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔ»-ի, ընդհանուր ենթակառուցվածքների համակարգման, պահպանման և սպասարկման» ծառայությունների մատուցման 2024 թվականի ծրագիր	46,781,787	
Համաշխարհային բանկի ,,Առնտրի խթանման և որակի ենթակառուցվածքի,, վարկային ծրագիր	663,459,158	
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Հայաստանյան Աշխատուժի Զարգացման ուղղված միջոցառումներ (Armenia Workforce Development Activity)» ծրագիրն իրականացնելու համար կնքված No. 72011121CA00003 Համագործակցության համաձայնագիր	343,861,063	
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) "Հաստատագրված գումարի մրցանակ" ծրագրի թիվ 72011123FA00001 Համագործակցության համաձայնագիր	226,663,897	
Կոկա Կոլա Հիմնադրամի առ 06 հունվարի 2023թ. թիվ IG 2022 / 72307 Դրամաշնորհային պայմանագիր "Խաղային էկոհամակարգը հզորացնում է երիտասարդներին ծրագիր"	12,808,063	
Ֆիլիպ Մորիս Արմենիա ՍՊԸ-ի հետ առ 02 հուլիսի 2024թվականին կնքած պայմանագիր Էկոհամակարգի զարգացման, Գիտական Ինկուբացիայի ծրագիր	319,030,530	

PORTO DIGITAL ընկերության միջև կնքված «Թվային ծառայությունների ձեռքբերման համար անհատականացված ուսուցում նախագծի» ծրագիր	4,694,284
ՄԱԿ -ի Մանկական Հիմնադրամի (UNICEF) միջև առ 28 մարտի 2024թ. թիվ ARM/PCA 202239/ SPD 2024120 Ծառայությունների մատուցման պայմանագրի (Պատանիներին, նրանց ծնողներին և ուսուցիչներին զինել կիբերանվտանգության վերաբերյալ կարևոր թվային հմտություններով և գիտելիքներով) ծրագիր	24,750,662
ՄԱԿ -ի Մանկական Հիմնադրամի (UNICEF) միջև առ 03 դեկտեմբերի 2024թ. թիվ ARM/PCA202239/PD2024168 Ծառայությունների մատուցման պայմանագրի (Խաղը Փոփոխողներ դեռահասներին և երիտասարդներին STEAM-ի և կլիմայի փոփոխության հիմնական հմտություններով զինելը) ծրագիր	274,000
Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամ (Հայաստան)-ի առ նոյեմբերի 22-ին 2023 թվականի ԹԻՎ AGBU/F-204/23 ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, «ԿԱՏԱՊՈՒԼՏ Ստեղծարար աքսելերացիոն» ծրագիր	2,020,000
Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի գործունեության ապահովման 2024թ ծրագիր	157,135,094
Վանաձոր տեխնոլոգիական կենտրոնի գործունեության ապահովման 2024թ-ի ծրագիր	65,984,842
Գյումրի տեխնոլոգիական կենտրոնի գործունեության ապահովման 2024թ-ի ծրագիր	85,716,615
Հայ-Հնդկական կենտրոնի գործունեության ապահովման 2024թ-ի ծրագիր	27,841,122
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,994,583,336
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	1,994,583,336

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 26 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ Digitally signed by MAMIKONYAN LILIT 6701720129 _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբեր 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 7

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 8

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 9

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 10

bakertilly

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

18.06.2025 թ.
N 022517

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ.Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ձեռնարկությունների ինկուբատոր»
Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ձեռնարկությունների ինկուբատոր» Հիմնադրամի (Հիմնադրամ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր

Լ.Հակոբյան

18.06.2025թ.

'000 դրամ

	Ծանոթ.	*31.12.2024թ.*	*31.12.2023թ.*
Ակտիվ			
Հիմնական միջոցներ	6	892,356	764,056
Ոչ նյութական ակտիվներ	7	147,003	153,881
Հետաձգված հարկային ակտիվներ	19	6,570	2,414
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,045,929**	**920,351**
Պաշարներ	8	21,480	73,676
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	116,688	42,253
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային ակտիվ		-	1,549
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	372,525	497,970
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**510,693**	**615,448**
Ընդամենը ակտիվներ		**1,556,622**	**1,535,799**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհների ոչ ընթացիկ մաս	11	558,566	525,979
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**558,566**	**525,979**
Ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհների ընթացիկ մաս	11	424,702	308,731
Եկամուտներին վերաբերող շնորհներ	12	220,173	173,233
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	224,634	372,530
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**869,509**	**854,494**
Ընդամենը պարտավորություններ		**1,428,075**	**1,380,473**
Կուտակված արդյունք		128,547	155,326
Ընդամենը զուտ ակտիվներ		**128,547**	**155,326**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2025 թվականի հունիսի 18-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Գլխավոր տնօրեն Բագրատ Ենգիբարյան

Գլխավոր հաշվապահ Լիլիթ Մամիկոնյան

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

'000 դրամ

	Ծանոթ.	**2024թ.**	**2023թ.**
Շնորհներից եկամուտ	14	1,326,241	1,274,481
Ծառայությունների մատուցումից հասույթ	15	603,451	608,808
Ծրագրերի գծով ծախսեր	16	(1,326,241)	(1,274,481)
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	17	(529,720)	(508,402)
Համախառն շահույթ		**73,731**	**100,406**
Վարչական ծախսեր	18	(94,960)	(105,110)
Այլ եկամուտներ		5,430	1,284
Այլ ծախսեր		(15,606)	(13,197)
Գործառնական վնաս		**(31,405)**	**(16,617)**
Տոկոսային եկամուտներ		1,360	1,089
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/ (վնաս)		(890)	1,496
Վնաս մինչև հարկումը		**(30,935)**	**(14,032)**
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	19	4,156	(1,878)
Տարվա վնաս		**(26,779)**	**(15,910)**
Ընդամենը համապարփակ արդյունք		**(26,779)**	**(15,910)**

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

'000 դրամ	***Կուտակված արդյունք***
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**171,236**
Տարվա վնաս	(15,910)
Ընդամենը տարվա համապարփակ արդյունք	**(15,910)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**155,326**
Տարվա վնաս	(26,779)
Ընդամենը տարվա համապարփակ արդյունք	**(26,779)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ	**128,547**

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

'000 դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Որպես շնորհներ ստացված դրամական միջոցներ	1,281,750	1,417,005
Ծառայությունների մատուցումից և ապրանքների մատակարարումից ստացված դրամական միջոցներ	685,558	827,555
Վճարումներ մատակարարներին	(1,180,756)	(1,486,634)
Վճարումներ աշխատակիցներին	(318,136)	(322,369)
Վճարումներ բյուջե, բացառությամբ շահութահարկի	(436,376)	(408,026)
Վճարված շահութահարկ	(1,473)	(9,872)
Այլ մուտքեր	2,120	892
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**32,687**	**18,551**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերումների գծով վճարումներ	(159,325)	(77,861)
Ներդրումային գործունեությունում օգտագործված դրամական զուտ հոսքեր	**(159,325)**	**(77,861)**
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Տոկոսային եկամտի ստացում	1,360	1,089
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր	**1,360**	**1,089**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(125,278)**	**(58,221)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակահատվածի սկզբի դրությամբ	497,970	553,910
Փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(167)	2,281
Դրամական միջոցների համարժեքները տարեվերջի դրությամբ (ծնթգ. 10)	**372,525**	**497,970**

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Նկարագիր և գործունեություն

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) հիմնադրվել է 2002թ, Համաշխարհային բանկի «Ձեռնարկությունների ինկուբատոր» ծրագրի շրջանակում և աջակցում է Հայաստանում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների աճին՝ ստեղծելով նպաստավոր միջավայր նորարարության զարգացման, տեխնոլոգիաների կատարելագործման և ընկերությունների ընդլայնման համար:

Հիմնադրամը ծառայում է որպես հաղորդակցման հանգույց ոլորտում գործող բոլոր կառույցների համար՝ համատեղելով և համախմբելով բոլորի ջանքերը ՏՏ/ԲՏ ոլորտում գերազանցության հասնելու համար :

Հիմնադրամի հիմնական գործունեությունն է բիզնեսի զարգացման և խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Հիմնադրամն իրականացնում է ծրագրեր, որոնք իրականացվում են մի շարք կազմակերպությունների ֆինանսավորմամբ, ինչպիսիք են Համաշխարհային Բանկը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, Հայաստանի Հանրապետության Բարձր տեխնոլոգիաների նախարարությունը, Միջազգային համագործակցության գերմանական ընկերակցությունը և այլն:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը, 2024թ. 72 անձ է, իսկ 2023թ.՝ 72:

Իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Բագրևանդի 21/1, Շենք՝ Ինժեներական քաղաք Պլազա, որտեղ տեղակայված է վարչական գրասենյակը:

1.2. Կորպորատիվ կառուցվածք

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Հիմնադրամի տնօրենը:

1.3. ՖՀՄՍ-ներին համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

2. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

3. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը (բացառությամբ իրական արժեքի չափումը), որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 6 – Հիմնական միջոցներ – օգտակար ծառայության ժամկետի որոշում:
- Ծանոթագրություն 7 – Ոչ նյութական ակտիվներ – օգտակար ծառայության ժամկետի որոշում:
- Ծանոթագրություն 19 – Շահութահարկ – հետաձգված ակտիվների ճանաչում:
- Ծանոթագրություն 15 – Ծառայությունների մատուցումից հասույթ – ավարտվածության աստիճանի որոշում:

Իրական արժեքի չափում

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Հիմնադրամը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- 1-ին մակարդակ. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտվող):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- 3-րդ մակարդակ. Ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումներն Ընկերությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում՝ ֆինանսական գործիքների հետ կապված:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

4.1. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հիմնական միջոցների: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

4.2. Հիմնական միջոցներ

Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի գծով ծախսումները, նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած այլ ծախսումները, հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև դրանց զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը զուգընթաց:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

ա) ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,
բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,
գ) տեխնիկական հնացածությունը,
դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Հիմնադրամը հիմնական միջոցների նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունները.

Վարձակալված գույքի գծով կապիտալացված ծախսումներ	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5 տարի
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	5 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	3 տարի
Այլ հիմնական միջոցներ	8 տարի

Ակտիվի մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

4.3. Ոչ նյութական ակտիվներ

Չափումը ճանաչման պահին

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

ա) դրա գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը՝ առևտրային զեղչերը և արտոնությունները հանելուց հետո.

բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագա չափում

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար՝ հետևյալ օգտակար ծառայությունից ելնելով.

- Համակարգչային ծրագիր՝ 5 տարի
- Լիցենզիաներ՝ 1-10 տարի

Ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը գնահատվում է զրո, իսկ ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդն է գծային մեթոդը:

4.4. Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքի և իրացման զուտ արժեքի նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հիմնված է միջին կշռված արժեքի մեթոդի վրա և ներառում է պաշարների ձեռքբերման, տրանսպորտային ծախսումները, մաքսային վճարները, ինչպես նաև պաշարները ներկա գտնվելու վայր և ներկա վիճակի բերելու հետ կապված ծախսումները:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

Պաշարների կազմում հաշվառվում են Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի կողմից կազմակերպվող դասընթացների և սեմինարների մասնակիցներին տրամադրելու նպատակով Հնդկաստանի կառավարությունից ստացված գրքերը:

Պաշարների կազմում է հաշվառվում ենք ծառայությունների գծով անավարտ մասը:

4.5. Ֆինանսական գործիքներ

<u>Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ</u>

Հիմնադրամի դեբիտորական պարտավորությունները, փոխառությունները և դրամական միջոցները ու դրանց համարժեքները հանդիսանում են ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ:

Հիմնադրամը դեբիտորական պարտքերը, փոխառությունները և դրամական միջոցները ու դրանց համարժեքները սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը:

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Հիմնադրամի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ֆինանսական ակտիվների սկզբնական դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի բնութագրից և հիմնադրամի դրանց կառավարման բիզնես մոդելից:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացվող արժեքով:

<u>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</u>

Հիմնադրամի կրեդիտորական պարտավորությունները հանդիսանում են ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ դրանց առաջացման օրը:

Հիմնադրման ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.6. Վարձակալություն.որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Վարձակալության մեկնարկի ամսաթիվը՝ որի դրությամբ վարձատուն հիմքում ընկած ակտիվը դարձնում է մատչելի վարձակալի օգտագործման համար:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկբնական արժեքով:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին:

Վարձավճարները զեղչվում են՝ կիրառելով վարձակալի վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, վարձակալը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հիմնադրամը ներկայացնում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները՝ այլ ակտիվներից առանձին և վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններից առանձին:

Հիմնադրամը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների նկատմամբ կիրառում է հաշվառման պարզեցված մոտեցումներ և չի ճանաչում օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ:

Հիմնադրամը կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս (ծախսում) գծային հիմունքով:

4.7. Ծառայությունների մատուցումից հասույթ

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է, երբ (կամ այնքանով, որքանով) Հիմնադրամը կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին:

Հիմնադրամի կողմից մատուցվող ծառայություններից առաջացնում է ժամանակի ընթացքում կատարվող պարտականություններ: Յուրաքանչյուր կատարման պարտականության համար Հիմնադրամը ճանաչում է ժամանակի ընթացքում հասույթը՝ չափելով այդ կատարման պարտականության ամբողջությամբ կատարման առաջընթացը (աստիճանը):

4.8. Շնորհներ

Դոնոր կազմակերպություններից ստացված միջոցների հաշվառումն իրականացվում է ՀՀՄՍ 20 Պետական շնորհներ ստանդարտի հիման: Շնորհները կազմակերպությունների և պետական մարմինների կողմից ռեսուրսների փոխանցումներն են Հիմնադրամին՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Հիմնադրամի ակտիվները ֆինանսավորվում են շնորհներով, որոնք կարող են նաև փոխանցվել ոչ դրամային ակտիվի տեսքով: Ոչ դրամային ակտիվների տեսքով ստացված վերաբերող շնորհները ներկայացվում են իրենց անվանական արժեքով:

Հիմնադրամը ճանաչում է ակտիվներին վերաբերող շնորհները՝ որպես հետաձգված եկամուտ, որը ամորտիզացվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Հետաձգված եկամուտը սովորաբար դասակարգվում է որպես ոչ ընթացիկ պարտավորություններ: Այն մասը, որը հաջորդ տարի պետք է ճանաչվի եկամուտ, ներկայացվում է ընթացիկ պարտավորություններում:

Հիմնադրամը ներկայացնում է եկամուտներին վերաբերող շնորհները՝ օգտագործելով համախառն մոտեցումը:

4.9. Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթների գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթի փոխարկումից օգուտը կամ վնասը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթի ամորտիզացված արժեքի՝ ճշգրտված ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսի և վճարումների գծով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված արտարժույթի ամորտիզացված արժեքի միջև տարբերությունն է:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթ կամ վնասում՝ բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

4.10. Ծահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Հիմնադրամն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

5. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Հիմնադրամը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(ա) Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում՝ ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ գործնական կիրառման ուղեցույց 2-ի փոփոխություններ

ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), փոփոխությունները ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Այս փոփոխությունները ազդեցություն են ունեցել Հիմնադրամի՝ **հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա, բայց ոչ** Հիմնադրամի **ֆինանսական հաշվետվությունների ցանկացած միավորի չափման, ճանաչման կամ ներկայացման վրա:**

(բ) Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում՝ ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ

ՀՀՄՍ 8 ստանդարտի փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների, հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, այդ փոփոխությունները պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար: Փոփոխությունները ազդեցություն չունեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

(գ) Այլ ստանդարտներ

Ակնկալվում է, որ հետևյալ նոր և փոփոխված ստանդարտները չեն ունենա նշանակալի ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա.

- ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն Վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքներում;
- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ;
- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում:

6. Հիմնական միջոցներ

'000 դրամ	*Կապիտա-լացված ծախսում-ներ*	*Համակարգ-չային տեխ-նիկա*	*Տրանսպորտա-յին միջոցներ*	*Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք					
01 հունվար 2023թ.	**10,873**	**2,804,762**	**51,609**	**770,369**	**3,637,613**
Ձեռքբերում	-	161,245	366	102,676	**264,287**
Օտարում/Դուրսգրում	-	(58,926)	-	(44,365)	**(103,291)**
31 դեկտեմբեր 2023թ.	**10,873**	**2,907,081**	**51,975**	**828,680**	**3,798,609**
Ձեռքբերում	-	359,807	8,152	132,225	**500,184**
Օտարում/Դուրսգրում	-	(7,604)	-	(2,464)	**(10,068)**
31 դեկտեմբեր 2024թ.	**10,873**	**3,259,284**	**60,127**	**958,441**	**4,288,725**
Կուտակված մաշվածություն					
01 հունվար 2023թ.	**1,718**	**2,068,640**	**51,609**	**698,849**	**2,820,816**
Տարեկան մաշվածություն	544	296,006	-	14,042	**310,592**
Օտարում/Դուրսգրում	-	(53,289)	-	(43,566)	**(96,855)**
31 դեկտեմբեր 2023թ.	**2,262**	**2,311,357**	**51,609**	**669,325**	**3,034,553**
Տարեկան մաշվածություն	544	335,498	688	32,690	**369,420**
Օտարում/Դուրսգրում	-	(7,604)	-	-	**(7,604)**
31 դեկտեմբեր 2024թ.	**2,806**	**2,639,251**	**52,297**	**702,015**	**3,396,369**
Հաշվեկշռային արժեք					
01 հունվարի 2023թ.	**9,155**	**736,122**	**-**	**71,520**	**816,797**
31 դեկտեմբեր 2023թ.	**8,611**	**595,724**	**366**	**159,355**	**764,056**
31 դեկտեմբեր 2024թ.	**8,067**	**620,033**	**7,830**	**256,426**	**892,356**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

Կապիտալ ծախսումներն իրենցից ներկայացնում են վարձակալված տարածքների վրա իրականացված կապիտալ բնույթի ծախսումները, որոնցից ակնկալվում է ստանալ տնտեսական օգուտներ հետագա ժամանակաշրջաններում:

Մաշվածություն

'000 դրամ	**2024թ.**	**2023թ.**
Վարչական ծախսեր	31,295	40,795
Ծրագրերի գծով ծախսեր	338,125	269,797
	369,420	**310,592**

7. Ոչ նյութական ակտիվներ

'000 դրամ	*Համակարգչա-յին ծրագրեր*	*Լիցենզիաներ, ապրանքանիշեր և այլ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք			
01 հունվար 2023թ.	**142,501**	**29,737**	**172,238**
Ձեռքբերում	431	160,921	**161,352**
31 դեկտեմբեր 2023թ.	**142,932**	**190,658**	**333,590**
Ձեռքբերում	-	12,281	**12,281**
31 դեկտեմբեր 2024թ.	**142,932**	**202,939**	**345,871**
Կուտակված ամորտիզացիա			
01 հունվար 2023թ.	**138,741**	**29,735**	**168,476**
Տարեկան ամորտիզացիա	36	11,197	**11,233**
31 դեկտեմբեր 2023թ.	**138,777**	**40,932**	**179,709**
Տարեկան ամորտիզացիա	43	19,116	19,159
31 դեկտեմբեր 2024թ.	**138,820**	**60,048**	**198,868**
Հաշվեկշռային արժեք			
01 հունվարի 2023թ.	**3,760**	**2**	**3,762**
31 դեկտեմբեր 2023թ.	**4,155**	**149,726**	**153,881**
31 դեկտեմբեր 2024թ.	**4,112**	**142,891**	**147,003**

Ամորտիզացիա

'000 դրամ

	2024թ.	**2023թ.**
Վարչական ծախսեր	11	-
Ծրագրերի գծով ծախսեր	19,148	11,233
	19,159	**11,233**

8. Պաշարներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2024թ.*	*Մնացորդ 31.12.2023թ.*
Անավարտ ծառայություն	11,099	59,050
Գրքեր	8,556	8,836
Նյութեր	1,825	5,790
	21,480	**73,676**

2024թ. որպես ծախս ճանաչված պաշարների հաշվեկշռային արժեքը ստացված ծառայությունների ինքնարժեքում կազմել է 2,486 հազ. դրամ (2023թ.՝ 327 հազ. դրամ), վարչական ծախսերում՝ 6,117 հազ, դրամ (2023թ.՝ 10,622 հազ. դրամ), ծրագրերի գծով ծախսերում՝ 11,382 հազ. դրամ (2023թ.՝ 9,544 հազ. դրամ):

Պաշարների կազմում հաշվառված է Ֆիլիպ Մորրիս Արմենիա ՍՊԸ-ին մատուցված ծառայության անավարտ մասը՝ 11,099 հազար դրամ արժեքով:

9. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2024թ.*	*Մնացորդ 31.12.2023թ.*
Առևտրային դեբիտորական պարտքեր	81,618	30,878
Ծրագրերի գծով դեբիտորական պարտքեր	30,300	5,698
Տրված կանխավճարներ	4,770	3,134
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	-	37
Այլ	-	2,506
	116,688	**42,253**

10.Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2024թ.*	*Մնացորդ 31.12.2023թ.*
Բանկային հաշիվներ	331,456	414,518
Միասնական հաշվի մնացորդ	40,970	83,353
Դրամարկղ	99	99
	372,525	**497,970**

11.Ակտիվներին վերաբերող շնորհներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2024թ.*	*Մնացորդ 31.12.2023թ.*
Տարեսկզբի մնացորդ	834,710	711,115
Ավելացումներ	359,122	348,941
Վերադասակարգում եկամուտներին վերաբերող շնորհներից (տես՝ ծանոթ 12)	146,708	62,016
Ճանաչված եկամուտ (տես՝ ծանոթ. 14)	(357,272)	(287,362)
Տարեվերջի մնացորդ, որից՝	**983,268**	**834,710**
Ընթացիկ մաս	**424,702**	**308,731**

12.Եկամուտներին վերաբերող շնորհներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2024թ.*	*Մնացորդ 31.12.2023թ.*
Տարեսկզբի մնացորդ	173,233	46,677
Ավելացումներ (տես՝ Ծանոթ. 12.1)	1,359,907	1,302,401
Ճանաչված եկամուտ (տես՝ ծանոթ. 14)	(968,969)	(987,119)
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհներին (տես՝ ծանոթ. 11)	(146,708)	(62,016)
Ընթացիկ ակտիվների ձեռքբերում դրամաշնորհային միջոցներից	2,956	-
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը շնորհների վրա	505	1,251
Վերադասակարգում ստացված կանխավճարին	(200)	-
Այլ եկամտի ճանաչում	(3,138)	(3,036)
Դրամաշնորհների մասով ԱԱՀ	(99,224)	(124,293)
Շնորհի վերադարձ	(98,189)	(632)
Տարեվերջի մնացորդ	**220,173**	**173,233**

12.1 Ավելացումներ

'000 դրամ	*2024թ.*	*2023թ.*
Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի վարկային ծրագիր	645,804	662,324
ԱՄՆ ՄԶԳ «Առաջադեմ հետազոտությունների կենտրոն ծրագիր-ARC» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	375,309	65,891
ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագիր- AWDA» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	323,569	499,695
ԲՏԱ նախարարություն, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում	13,000	13,000
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (AGBU) «Կատապուլտ ստեղծարար աքսելերացիոն ծրագիր»	2,020	-
Թվային ծառայությունների ձեռքբերման համար EDUConnect անհատականացված ուսուցում CommuniCity նախագիծ	205	-
Coca Cola «Խաղային էկոհամակարգը հզորացնում է երիտասարդներին» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	-	57,083
Մոնֆալկոնեի քաղաքապետարանի «Հայաստանի համագործակցություն» նախագծի ծրագրի միջոցներ	-	4,408
	1,359,907	**1,302,401**

Մնացորդային արժեք

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2024թ.*	*Մնացորդ 31.12.2023թ.*
ԱՄՆ ՄԶԳ «Առաջադեմ հետազոտությունների կենտրոն ծրագիր-ARC» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	188,413	63,416
ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագիր- AWDA» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	21,897	87,003
Հայ-հնդկական միջազգային պայմանագրով ստացված միջոցներ	8,555	8,837
Համաշխարհային բանկի «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» վարկային ծրագրով ստացված միջոցներ	1,029	1,029
ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից ստացված միջոցներ (Գյումրու և Վանաձորի ՏԿ ծրագիր)	263	263
Coca Cola «Խաղային էկոհամակարգը հզորացնում է երիտասարդներին» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	16	149
Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի վարկային ծրագիր	-	12,531
ԲՏԱ նախարարություն, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում	-	5
	220,173	**173,233**

13.Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2024թ.*	*Մնացորդ 31.12.2023թ.*
Առևտրային կրեդիտորական պարտավորություններ	54,783	116,007
Ստացված կանխավճարներ	82,821	117,918
Աշխատակիցների գծով պարտավորություններ	35,519	14,601
Վճարվելիք այլ հարկեր և պարտավորություններ	51,161	113,959
Հիմնական միջոցների ձեռքբերումից կրեդիտորական պարտքեր	-	2,464
Այլ	350	7,581
	224,634	**372,530**

Առևտրային կրեդիտորական պարտքերը տոկոսակիր չեն և, որպես կանոն, մարվում են 30 օրվա ընթացքում:

14.Ծնորհներից եկամուտ

'000 դրամ

	2024թ.	2023թ.
Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի վարկային ծրագիր	643,294	773,281
ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագիր- AWDA» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	417,123	451,215
ԱՄՆ ՄԶԳ «Առաջադեմ հետազոտությունների կենտրոն ծրագիր-ARC» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	241,791	2,712
ԲՏԱ նախարարություն, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում	10,842	10,999
Coca Cola «Խաղային էկոհամակարգը հզորացնում է երիտասարդներին» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	6,587	26,096
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (AGBU) «Կատապուլտ ստեղծարար աքսելերացիոն ծրագիր»	2,020	-
ԱՄՆ ՄԶԳ «Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում» դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	2,438	2,438
Ֆիլիպ Մորրիս Արմենիա ՍՊԸ դրամաշնորհային ծրագրով ստացված միջոցներ	1,628	1,628
Հայ-հնդկական միջազգային պայմանագրով ստացված միջոցներ	281	1,390
Մոնֆալկոնեի քաղաքապետարանի «Հայաստանի համագործակցություն» նախագծի ծրագրի միջոցներ	237	4,722
	1,326,241	**1,274,481**

15.Ծառայությունների մատուցումից հասույթ

'000 դրամ

	2024թ.	2023թ.
Խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններից հասույթ (Ֆիլիպ Մորիս Արմենիայի գծով)	303,031	341,365
Գործառնական վարձակալություն	121,568	117,122
Խորհրդատվական այլ ծառայությունների մատուցումից հասույթ	74,992	104,432
Ինժեներական քաղաքի ընդհանուր ենթակառուցվածքների համակարգումից, սպասարկումից հասույթ	54,594	-
Դասընթացներից հասույթ	35,306	35,329
Այլ	13,960	10,560
	603,451	**608,808**

16.Ծրագրերի գծով ծախսեր

'000 դրամ

	2024թ.	2023թ.
Հատուցում աշխատակիցներին, ներառյալ ՔԻՊ շրջանակներում աշխատողներին	569,461	632,144
Մաշվածություն և ամորտիզացիա	357,273	281,030
Ստացված ապրանքներ և ծառայություններ	239,371	215,335
Ենթադրամաշնորհներ	160,136	132,706
Նյութական ծախսեր	-	5,368
Մրցանակներ	-	1,566
Այլ ծախսեր	-	6,332
	1,326,241	**1,274,481**

17.Մատուցված ծառայությունների ինքնարժեք

'000 դրամ

	2024թ.	2023թ.
Ֆիլիպ Մորիս Արմենիայի պայմանագրի գծով ծախսեր (տես՝ ստորև)	248,734	295,451
Հատուցում աշխատակիցներին, ներառյալ ՔԻՊ շրջանակներում աշխատողներին	155,341	127,722
Կոմունալ ծառայություններ	70,240	74,301
Դասընթացների իրականացում	-	370
Այլ ծառայություններ	55,405	10,558
	529,720	**508,402**

(ա) Ֆիլիպ Մորիս Արմենիայի պայմանագրի գծով ծախսեր

'000 դրամ

	2024թ.	2023թ.
Հատուցում աշխատակիցներին, ներառյալ ՔԻՊ շրջանակներում աշխատողներին	170,330	234,748
Ինկուբացիոն հետազոտություն	47,951	-
Ֆակուլտետային հետազոտության ծառայություններ	-	36,736
Միջոցառումներ և այլ ծախսեր	21,569	14,404
Concord Worldwide,Inc ծրագրի ծառայության ծախսեր	-	4,175
Այլ	8,884	5,388
	248,734	**295,451**

18.Վարչական ծախսեր

'000 դրամ

	2024թ.	2023թ.
Մաշվածություն և ամորտիզացիա	31,306	40,795
Հատուցում աշխատակիցներին, ներառյալ ՔԻՊ շրջանակներում աշխատողներին	21,459	-
Հիմնական միջոցների սպասարկում	11,139	12,575
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	6,191	24,214
Աուդիտի և խորհրդատվության ծախսեր	5,917	4,590
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	3,677	3,889
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	1,435	2,524
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	2,638	2,448
Այլ	11,198	14,075
	94,960	**105,110**

19.Շահութահարկի գծով փոխհատուցում

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Ընթացիկ և հետաձգված շահութահարկի գծով ծախսը և փոխհատուցումը ներկայացված են ստորև.

'000 դրամ	2024թ.	2023թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	-	-
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում/(ծախս)	4,156	(1,878)
	4,156	**(1,878)**

Տարվա փաստացի հարկային ծախսերի և ՀՀ-ում շահութահարկի սահմանված դրույքի միջև տարբերության պատճառները ներկայացված են ստորև.

‘000 դրամ	2024թ.		2023թ.	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Վնաս նախքան շահութահարկով հարկումը	**(30,935)**		**(14,032)**	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	5,568	18.0	2,526	18.0
Զուտ չհարկվող եկամուտ/ (չնվազեցվող ծախսեր)	(1,412)	(4.6)	(4,404)	(31.3)
	4,156	**13.4**	**(1,878)**	**(13.3)**

(բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

	Ակտիվներ		*Պարտավորություններ*		*Զուտ*	
հազ. Դրամ	**31 դեկտեմբեր 2024թ.**	**31 դեկտեմբեր 2023թ.**	**31 դեկտեմբեր 2024թ.**	**31 դեկտեմբեր 2023թ.**	**31 դեկտեմբեր 2024թ.**	**31 դեկտեմբեր 2023թ.**
Հիմնական միջոցներ	177	-	-	(215)	177	(215)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	6,393	2,629	-	-	6,393	2,629
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**6,570**	**2,629**	**-**	**(215)**	**6,570**	**2,414**

(գ) Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ

հազ. Դրամ	*1 հունվարի 2024թ.*	*Շահույթում կամ վնասում ճանաչված*	*31 դեկտեմբերի 2024թ.*
Հիմնական միջոցներ	(215)	393	178
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	2,629	3,763	6,392
Զուտ հարկային ակտիվներ	**2,414**	**4,156**	**6,570**

հազ. Դրամ	*1 հունվարի 2023թ.*	*Շահույթում կամ վնասում ճանաչված*	*31 դեկտեմբերի 2023թ.*
Հիմնական միջոցներ	186	(401)	(215)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	4,106	(1,477)	2,629
Զուտ հարկային ակտիվներ	**4,292**	**(1,878)**	**2,414**

20. Իրական արժեք. ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը

Իրական արժեք

Հիմնական ֆինանսական ակտիվներն են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները, դրամական միջոցները, իսկ ֆինանսական պարտավորությունները՝ վարձակալության գծով պարտավորությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով և դրանց գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են հաշվեկշռային արժեքներին:

Ֆինանսական ռիսկերի կառավարման հիմունքներ

Հիմնադրամը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման համար և վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկողության մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Հիմնադրամը չի հեջավորում իր ենթարկվածությունը այդ ռիսկերին:

Պարտքային ռիսկ

Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքեր) և ներդրումային գործունեության (տրված փոխառություններ) հետ:

Վաճառքների գծով պարտքային ռիսկի կառավարումն իրականացվում է հաշվապահության կողմից: Դեբիտորական պարտքերի գծով իրականացվում է կանոնավոր մոնիտորինգ: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է բոլոր գնորդների համար արժեզրկման (անհավաքագրելիության) ստուգում՝ անհատական հիմունքով: Պարտքերի համար ապահովություն (գրավ) չի պահանջվում:

Առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին իր ենթարկվածությունը սահմանափակելու համար Հիմնադրամը վճարման առավելագույն ժամկետ է սահմանել 30 օր: Դեբիտորներից ոչ մեկը չունի արտաքին պարտքային վարկանիշ: Դեբիտորների մեծամասնությունը համագործակցում է Հիմնադրամի հետ շատ երկար ժամանակ:

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկի համակենտրոնացումը գնահատվում է ցածր:

Իրացվելիության ռիսկ

Այն ռիսկն է, որ Հիմնադրամը դժվարություններ կունենա իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Հիմնադրամը իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելու գործիքը: Հիմնադրամի նպատակն է պահպանել ֆինանսավորման շարունակականության և ճկունության միջև հավասարակշռությունը՝ բանկային օվերդրաֆտների, վարկերի և ապառիկով պաշարների գնման պայմանագրերի օգտագործման միջոցով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հավասար են չգեղչված պայմանագրային վճարումներին, բացառությամբ ստացված անտոկոս փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հիմնված չգեղչված պայմանագրային վճարումների վրա, ինչպես նաև հաշվեկշռային արժեքները:

'000 դրամ

31.12.2024թ.		**Պայմանագրային վճարումներ**			**Հաշվեկշռային արժեք**
	Ցպահանջ	**մինչև 1 տարի**	**1-ից 5 տարի**	**Ընդամենը**	
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	90,652	-	**90,652**	**90,652**

'000 դրամ

31.12.2023թ.		**Պայմանագրային վճարումներ**			**Հաշվեկշռային արժեք**
	Ցպահանջ	**մինչև 1 տարի**	**1-ից 5 տարի**	**Ընդամենը**	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		140,653	-	**140,653**	**140,653**

Շուկայական ռիսկ

Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է երեք տեսակի ռիսկ՝ արժութային ռիսկ, տոկոսադրույքային ռիսկ և այլ գնային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, գնումների գծով կրեդիտորական պարտքերը, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, վաճառքների գծով դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները:

Արժութային ռիսկ

Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ռիսկին ենթարկվում են արտարժույթով վարկերը, գնումների գծով կրեդիտորական պարտքերը: Արժույթները, որոնք հիմնականում առաջացնում են նման ռիսկ, հետևյալն են՝ ԱՄՆ դոլար, Եվրո, ՌՌ:

Արժույթով արտահայտված ֆինանսական ակտիվները, որոնք ենթարկվում են արժութային ռիսկի, նկարագրված են ստորև

	USD		*EUR*	
Հոդված	**2024թ.**	**2023թ.**	**2024թ.**	**2023թ.**
Ընթացիկ ակտիվներ				
Դրամական միջոցների համարժեքներ	562,343	363,188	13,595	59
Զուտ հաշվեկշիռ	**562,343**	**363,188**	**13,595**	**59**

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

ՀՀ դրամ	***31.12.2024թ.***	***31.12.2023թ.***
1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
1 Եվրո	413.89	447.90

Աղյուսակում ներկայացված է ԱՄՆ դոլարի, Եվրոյի փոխարժեքի հնարավոր փոփոխության նկատմամբ զգայունությունը՝ այլ փոփոխականների հաստատուն լինելու դեպքում: Հիմնադրամի նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը պայմանավորված է դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների փոփոխություններով: Այլ արժույթների փոփոխությունների նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը էական չէ:

	Արտարժույթ	**Փոխարժեքի փոփոխություն**	**Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը (‘000 դրամ)**
2024թ.	**ԱՄՆ դոլար**	+5%/-5%	28,117/(28,117)
2023թ.	**ԱՄՆ դոլար**	+5%/-5%	18,159/(18,159)
2024թ.	**Եվրո**	+5%/-5%	680/(680)
2023թ.	**Եվրո**	+5%/-5%	3/(3)

Տոկոսադրույքային ռիսկ

Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի փոփոխությունները գլխավորապես ազդում են վարկերի վրա՝ փոփոխելով նրանց իրական արժեքը: Ստացված վարկերը ֆիքսված տոկոսադրույքով են: Ղեկավարությունը չունի ձևակերպված քաղաքականություն ֆիքսված կամ փոփոխական տոկոսադրույքների նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը: Նոր տոկոսակիր ֆինանսական պարտավորությունների ներգրավման դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա, որոշելու, թե որ տիպի տոկոսադրույքը ավելի բարենպաստ կլինի Հիմնադրամի համար մինչև ակնկալվող մարման ժամկետի ընթացքում:

Հիմնադրամը ունի ֆիքսված տոկոսադրույքով տոկոսակիր ֆինանսական գործիքների հետևյալ կառուցվածքը.

	Հաշվեկշռային արժեք	
‘000 դրամ	**31.12.2024թ.**	**31.12.2023թ.**
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցների համարժեքներ	372,525	497,970
Ֆինանսական պարտավորություններ	-	-
Զուտ հաշվեկշիռ	**372,525**	**497,970**

Այլ գնային ռիսկ

Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժութային ռիսկից առաջացողներից) արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով:

Այլ գնային ռիսկերի ազդեցությունը էական չէ:

21.Կապակցված կողմերի բացահայտումներ

Վերահսկողություն

Հիմնադրամի վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում հոգաբարձուների խորհուրդը, որը նախագահում է պարոն Հ. Մուսայելյան (Սինոփսիս Արմենիա ՓԲԸ-ի տնօրեն):

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմին կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2024թ. կազմել է 74,430 հազար դրամ (2023թ.՝ 82,532 հազար դրամ): Առանցքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

22.Պայմանականություններ

Բիզնես միջավայր

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է քաղաքական և տնտեսական փոփոխությունների փուլում: Չկան բիզնեսի և վերահսկողական այնպիսի զարգացած ենթակառուցվածքներ, ինչպիսիք կան ավելի հասուն շուկայական տնտեսություններում: Ավելին, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեությունը և վերջիններս ոչ միշտ են ճիշտ արտացոլում ֆինանսական գործիքների արժեքը: Հետագա տնտեսական աճի հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է և տարածաշրջանային անկայունությունը: Աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչն ազդում է համընդհանուր զնողունակության և պահանջարկի վրա:

Ֆինանսական ահշվետվությունները արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա բիզնես միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատումը: Բիզնես միջավայրի ապագա փոփոխությունները կարող են տարբերվել Ղեկավարության գնահատումներից:

Ապահովագրություն

ՀՀ-ում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում: Ներմուծվում են զարգացած երկրներում վաղուց կիրառելի ապահովագրական գործիքներ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ Հիմնադրամը իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ):

Քանի դեռ չի իրականացված ակտիվների ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

Դատական հայցեր

Հիմնադրամին ներկայացվող դատական հայցերի առումով Հիմնադրամի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Հարկերի հաշվառման անորոշություններ և պայմանականություններ

ՀՀ հարկային համակարգը, հարկային հարաբերությունները կարգավորվում է հիմնականում ՀՀ հարկային օրենսգրքով: Օրենսդրությունում փոփոխությունները, պաշտոնական պարզաբանումները կամ իրազեկումները, դատական մարմինների որոշումները, օրենսդրության տարընթերցումները, տարաբնույթ մեկնաբանությունները առաջացնում են հարկային պարտավորությունների գնահատման անորոշություններ: Ներկայացված և վճարված հարկային պարտավորությունների ճշտությունը ենթակա է ստուգման հարկային մարմինների կողմից, որոնք խախտումների համար իրավասու են առաջադրել տույժեր, տուգանքներ: Հարկային պարտավորությունները չեն կարող փոփոխվել, եթե դրանք վերաբերում են երեք տարուց ավել վաղեմությանը:

Ղեկավարությունը որոշում է, թե արդյոք հարկավոր է դիտարկել յուրաքանչյուր հարկային անորոշությունն առանձին կամ մեկ և ավելի հարկային անորոշությունների հետ միասին՝ կախված նրանից, թե որ մոտեցումն է թույլ տալիս լավագույնս կանխատեսել անորոշության լուծումը: Ղեկավարությունը ենթադրում է, որ հարկային մարմինը կստուգի այն գումարները, որոնք նա իրավունք ունի ստուգելու և այդ ստուգումները կատարելիս՝ կունենա համապատասխան տեղեկություններին վերաբերող ամբողջական տեղեկատվություն:

Ղեկավարությունը գտնում է, որ ճիշտ է ճանաչել հարկային պարտավորությունները: Այնուամենայնիվ, հարկային մարմինը կարող է ունենալ Հիմնադրամի կողմից հաշվարկված և ներկայացված հարկային պարտավորությունների վերաբերյալ այլ մեկնաբանություններ, որոնք կարող են ի հայտ գալ ստուգումների, ուսումնասիրությունների ընթացքում:

23.Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից (31.12.2024թ) հետո մինչև վավերացման ամսաթիվը (18.06.2025թ.) ընկած ժամակահատվածում: Հաշվետու ամսաթվից (31.12.2024թ) հետո տեղի է ունեցել էական չճշգրտող դեպք՝ Հիմնադրամի ամենախոշոր շնորհատուն՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, համաձայն 26.02.2025թ. նամակի, դադարեցրել է Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորումը՝ հիմնվելով 24.01.2025թ. ստացված նամակի վրա կատարելու ԱՄՆ նախագահի գործադիր հրամանագիրը «Ռադիկալ և անարդյունավետ կառավարության կողմից DEI ծրագրերը և նախապատվությունները դադարեցնելու մասին», «Բազմազանություն, հավասարություն, ներառում և մատչելիություն դաշնային աշխատուժում» 14035 գործադիր հրամանագրի չեղարկումը և Պետդեպարտամենտի կողմից տրամադրված լրացուցիչ ուղղորդումը:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 26.06.2025 17:46